Խաչի ճակատին էլ կայ հետեւեալ արձանագրութիւնը.

«+ Սբ նշան տէրունական Ռուբէնին լեր բար(է)խ/աւս ի յահեղ աւուր դատաստանին»:

Այս վերջին արձանագրութեան երկու տողի մէջ, ուղիղ խաչի ճակատի կեդրոնում փորագրուած է հետեւեալ խմբանկարը.

Պատկեր 45
Մանրանկար Ռոսլինի Սեբաստ. աւետարան, 1262 թ.
(նախատակէն տպուած)

Աստուածածին Յիսուս գրկին, երկու կողմից մի մի հրեշտակ, երկար զգեստ և գօտէկապ. պատկերներից վերև «Գաբ». «Յ̃ն Ք̃ն». «Միքայէլ» գրուած. խաչի վերին անկիւններում դարձեալ մի մի հրեշտակ, որոնց թևերից վեր մարդկային դէմքով մի մի գլուխ «արեգ» և «լուս» գրուած:

Այս նկարագրութիւնից պարզ է, որ այստեղ եւս խաչելութեան և նորա հետ կապուած փրկութեան գաղափարն է ներկայացուած, թէև խաչեցեալի փոխարէն մանուկ Յիսուսն է մօր գրկում:

Ամենափրկիչ խաչքարերի կամ խաչից իջեցնելու պատկերագրութեան պէսպիսութիւններ, բնականաբար, երեւան են գալիս և հայ մանրանկարչութեան մէջ, բայց մեր նպատակից դուրս է այս հարցին հետեւիլ իւր բոլոր բովանդակութեամբ, իբրև օրինակ միայն բերենք Թորոս Ռոսլինից և Սարգիս Պիծակից մի երկու մանրանկար: Առաջին երկուսը Ռոսլինի գործերն են (պատկ. 45 և 46), մէկը Սեբաստիայի աւետարանից և միւսը Երուսաղէմի N 1956, որոնք բոլորովին տարբեր ձևակերպութիւն ունին, քան մեր խաչքարերի պատկերագրութիւնը: Համեմատաբար նման մասեր ունի Սարգիս Պիծակի պատկերը, թէև ամբողջութիւնը նոյնպէս տարբեր (պատկ. 47): Սարգիս Պիծակի մանրանկարի մէջ տեսնում ենք կրկնախաչ նոյն խաչափայտը արեգակի և լուսնի պատկերներով, Յովսէփը բարձրացած սանդուղի վերայ՝ գրկել է մարմինը աջով, և ձախ ձեռքին ունելիքով կամենում է ազատել խաչեցեալի ձախ ձեռքը. Մարիամ համբուրում է որդու աջ ձեռքը, որ պոկուած է արդէն, նման Ամենափրկիչների պատկերագրութեան: Խաչեցեալի ձախ կողմից, ուր սովորաբար Յովհաննէսն է կանգնած, ծունկ է չոքած Մարիուն թագուհին, ձեռքերն աղօթաւորի նման մեկնած. գլխի մօտ մակագրուած է. «Մարիուն թա/գո/ւհի / հայ/ոց»: Իբրև մօտիւ նոր է խաչափայտի հորիզոնական թևերի վերայ արմաւենիկների տերեւները, որ խաչի բերած անմահութեան կամ փրկութեան գաղափարն է մատնանշում, ապա գագաղը, ուր պիտի ամփոփէր Յովսէփ Յիսուսի մարմինը: Վերին շըրջանակի վերայ գրուած է. «Ի խաչէն ի վայր